ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ «ԱՆԻՎ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵՎ «ՈՍԿԵ ՏԱԿԱՌ-ԱԼԿՈ» ՍՊԸ-Ի ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Մերժել մինչեւ «Գյուղական վայրերում փոքր եւ միջին ձեռնարկատիրության խթանման «Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Մինասյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի «..., նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասի եւ 3 հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» եւ ««Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ...» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դատաքննության ավարտը «Սնանկության մասին» ՀՀ ՀՕ-51-Ն օրենքի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունները՝

ա) նկատի ունենալով, որ, նախ՝ գործի քննությունը՝ կոնկրետ եւ վերացական քննության ընթացակարգերով, միմյանցից տարբերվում են, եւ անհատական դիմումները քննության են առնվում կոնկրետ քննության ընթացակարգով, եւ դիմող սուբյեկտն իրավասու է սահմանադրական դատարան դիմել միայն կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով, եւ նա չի կարող միջնորդություն ներկայացնել ինչպես ամբողջ օրենքի սահմանադրականության հարցով, այնպես էլ դրա գործողությունը կասեցնելու հարցով. այդպիսի իրավասություն ունեն միայն վերացական վերահսկողության սուբյեկտները,

բ) եթե նույնիսկ խոսքը վերաբերեր օրենքի առանձին դրույթին, ապա այն արդեն իսկ կիրառվել է, առանց որի դիմողը չէր կարող դիմել սահմանադրական դատարան:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա կազմակերպվում է սահմանադրական դատարանի գործունեությունը, չի նախատեսում որեւէ դրույթ, որով արդեն իսկ կիրառված օրենքի նորմի կասեցումը դիմողի համար կարող է առաջացնել իրավական հետեւանքներ:

2. Վերանայել «Գյուղական վայրերում փոքր եւ միջին ձեռնարկատիրության խթանման «Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Մինասյանի

դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի «..., նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասի եւ 3 հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» 06.11.2007թ. ՍԴԱՈ-112 եւ ««Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ...» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» 11.12.2007թ. ՍԴԱՈ-117 աշխատակարգային որոշումների՝ համապատասխանաբար 3-րդ եւ 4-րդ կետերը եւ գործի քննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 դեկտեմբերի 2007 թվականի
ՍԴԱՈ -120